



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ/
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KAPAN
КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Գ.Նժդեհի հեռ.09379-59-21 e-mail info_kapan@aarhus.am, kapan.aarhus@mail.ru

№ N-001/03

< 31 > 03 2014

<<Հայջրմուկոյուղի>> ՓԲԸ գլխավոր
տնօրեն պրն. Պատիկ Լորենին

Կրկնակի հարցում

Հարգելի պարոն Լորեն,

հիշեցնենք, որ փետրվարի 25-ին Կապանի Օրհուս կենտրոնը Ձեր ուշադրությունն էր հրավիրել << Սյունիքի մարզի Բարեկավան բանավանի երեք շենքերի 58 բնակիչների կոյուղու դիտահորից կեղտաջրերի դուրս հորդման ահազանգի վրա ու խնդրել տեղակալություն 2 տարվա վաղեմության այդ խնդրի լուծման ուղղությամբ կայացրած որոշման մասին:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագիրը և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, խնդրում եմ Ձեզ, Կապանի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն, թե ի՞նչ աշխատանքներ են տարվել կամ տարվում վերոնշյալ խնդիրը կարգավորելու ուղղությամբ, վերջնականապես ե՞րբ վերջնական լուծում կստանա Բարեկավան բանավանի բնակիչներին անհանգստացնող վերոնշյալ խնդիրը:

<<Տեղեկատվության մատչելիության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում: Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Հարանքներով՝

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող

Աշոտ Ավագյան

